

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԱՒԱԾ

Տարեկան . . 12 Ժր.

Վեցամսեայ . . 6 "

ԱՐՏԱՍԱՀԱՄԱՆ

Իկու թիւ մէկ ծրարով

Տարեկան . . 14 Ժր.

Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ


Տարեկան 2.60 Տօլար

Վեցամսեայ 1.50 "

ԿԱՆԽԻԿ

Ծրանշխման տուր

20 Լանդիլ



Լ Ր Ա Ք Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԷ

Rédaction du journal

Iravounk "

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Դրոշմը ևս

չեն տրոշիր

Տ. ՍԱՀԱԿ ԿԱԹՈՂԻԿ. ԿԻՆԻԿԻՈՅ

ԲԵՐԻՆԵԱՅ Է ԻՐ ՊԱՇՏՈՆԸ

Մեր անցած թիւերով ծանուցած էինք Երուսաղէմի վանքին Լուսարարապետ Տ. Սահակ Արքեպիսկոպոսի ընտրութիւնը. Ատանայի Ընտրողական Ժողովոյ միաձայն քուէարկութեամբ:

Այսօր ուրախ ենք ծանուցանելու թէ Ն. Ամենապատուութիւնը Պօլսոյ Պատրիարքին ուղղած հետեւեալ հեռագրովը այլեւս անստուգութենէ կազատէ Կիլիկիոյ թեմականները:

ԵՐՈՒՍԱԼԷՄ, 19 Հոկտ.

Առ Ամեն. Պատր. Հայոց Կ. Պոլիս «Ենտրականութիւն» կը յայտնեմ Ձեր Սրբազնութեան հեռագրին համար որով Սոյ կաթողիկոսութեան ընտրութիւնը ծանուցանէիք ու կը շնորհաւորէիք:

«Այս նոր պաշտօնին ու դիրքին պարտականութիւններն յաջողութեամբ կարենալ կատարելու համար, կապաւինիմ Աստուծոյ օգնութեան, Վեհ. Կայսեր բարեհաճութեան, Կայսերական Կառավարութեան բարեացակամութեան ու հովանաւորութեան, եւ Ձեր Պատրիարքութեան եւ Ազգիս յարատեւ աջակցութեան»:

ՍԱՀԱԿ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

Ն. Ամենապատուութեան հաճութիւնը յայտնող այս հեռագրէն վերջ, Պատրիարքարանը Ատանայի Ընտ. Ժողովին տեղեկագիրն ալ ստանալուն պէս, ընտրութեան արդիւնքը կառավարութեան պիտի ներկայացնէ, ըստ օրինի Կայսեր. Խրատեն խնդրով նոր կաթողիկոսին պաշտօնավարութեան համար:

Արդ, եկեղեցական այս բարձր պաշտօնէին անցեալին մասին այս առթիւ մէկ քանի ծանօթութիւնտալ հարկ կը դառնայ:

Նորընտիր կաթողիկոսը բնիկ խորհրդացի է ու Եղեգիս գիւղին մէջ ծնած 1849ին. իր աւագանի անունն էր Գաբրիէլ: Կիլիկիոյ կաթողիկոսներուն Աջապահեան Ընտանեկան Զարմէն Սոյ կպիսկոպոս մը նուիրակութեան հիւստ ըլլալով խորհրդի թեմերը, տեղւոյն Առաջնորդարանը անոր ներ-

կայութենէն կօդտուի, ու քաղաքացի և Եղեգիսցի մէկ քանի պատանիները Գաբրիէլեան աստիճան առնելու կտրտօնէ. Սոցիի նուիրակը նախապատուութիւնը տիրացու Գաբրիէլին կուտայ, որը 1867ին Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանը կընդունուի: 1869ին սարկաւագ կը ձեռնադրուի ու նոյն վարժարանին ուսուցիչ ըլլալով, յաջորդաբար կը դասախօսէ հայ լեզու, կրօնագիտութիւն, Եկեղեցական պատմութիւն, Աշխարհագրութիւն, Պատմութիւն, Բնագաւառութիւն, և Գեղարարութիւն, մինչև 1868ին. 1870ին Պոլիս գալով, մասնաւոր ուսուցիչներու խնամքին տակ, հոգ տարած է ֆրանսերէն լեզուին և չափաքիտական ուսման քննութիւնի հմտանալու: 1874էն 1881 Ժառանգ. վարժարանին տեսչութիւնը վարած է. Մուրատեանի Տնօրէնութեամբ հրատարակուող Սիօն ամսօթերթին աշխատակցած է չորս տարիի չափ. վանքին Ուսումնական ու Տնտեսական Խորհուրդներուն անդամակցած է: Վերջապէս 1877ին Եսայի Պատրիարքէն վարդապետ ձեռնադրուած ու 1881էն 35 նուիրակութեան պաշտօնով Բուսիա զրկուած է: Տ. Սահակ եպիսկ. Երուսաղէմի Օրացոյցը ինք չինած է երկար տարիներ, ու միաբանութեան Ընդհանուր Ժողովոյն ատենապետ և ատենադպիր եղած է: Իսկ 1885էն ի վեր կը վարէ Երուսաղէմի վանքին Լուսարարապետի պաշտօնը, որը պատրիարքութենէ անմիջապէս ետքը կուգայ: Միեւնոյն ատեն որ Լուսարարապետ կընտրուէր, Միաբանութեան Ընդ. Ժողովէն եպիսկոպոսանալու վկայագիր ընդունելով, Տ. Սահակ կաթողիկոսէն Եպիսկոպոս ձեռնադրուելու համար էջմիածին կուղեւորէր. Երուսաղէմի վանքին մէջ նորընտիր կաթողիկոսին գործունէութիւնը գլխաւորաբար կախացած է դասախօսութեան ու զանազան դասագրքեր հեղինակելու մէջ. նոր միաբանները ընդհանրապէս անոր աշակերտներն են, ու անոր դասագրքերն ալ բաւական ընդհանրացած են: Հրատար-

արկած է Գաբրիէլեան Աշխարհագրութիւնը, Տնօրէնարարութիւնը (1876) և Երուսաղէմի Պատմութիւնը (1877) իր Գաբրիէլեան ձեռագրէն: Երուսաղէմի կաթողիկոսական ընտրութեան միջոցին, իբրև պատգամաւոր Երուսաղէմի Միաբանութիւնը կը ներկայացնէր:

Նորընտիր կաթողիկոսին անցեալի մասին այս համառօտ ծանօթութիւնները տալէ վերջ իր նորընտիր բարձր բայց բազմակնճիռ պաշտօնը աղգին օգտակար կերպով կարենալ վարելու համար կարողութիւնն ու յաջողութիւնը կը մաղթենք իրեն:

ՕՐՈՒՄԱՆ ԲԱՆԱԲԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Եւրոպայի դիւանագիտութիւնը ծանր անհանգստութեանց մատնող Մակեդոնական պատմութիւնը — որ մեզի ալ հոգեպառ կը թողուր — իրաւ, կեանք ու տեւողութիւն ունեցաւ: Սփիւռքէն ու Պոլսէն տրուած հեռագրական տեղեկութիւններն ալ տարակոյսի հետքն անգամ չեն թողուր թէ Պօլս Սարաֆովի մրցակից ու հակառակորդ Զօնչէվ-Միխայէլովքի խրճ. բռնկին վերջրս Մակեդոնիոյ մէջ կազմակերպած պատմութեան շարժումը վերջ գտած է. արդէն յայտնի էր թէ այդպիսի շարժում մը, ձեռնամուտքի միջոցին սկսուած ուր լեռներն ու դաշտերը ծածկող ձիւնը ու սառուցեալ եղանակը ճամբաները խափանելով, երթեւեկութիւնը բացարձակապէս անկարելի կընեն, ճակատագրօրէն անհետանալը մնալու, որորմելի կերպով վիճելու դատապարտուած էր. երբ մանաւանդ Մակեդոնացի իդափոխական տիտղոսաւոր վաւրիները — մերիներէն վար չմնալին — ոչ իսկ տարրական հայրենասիրութիւնն ու խոհականութիւնը կրցեր էին ղեկնալ իրենց մէջ տասնապատիկ հզօր ու կազմակերպեալ հասարակաց թշնամիի մը դէմ իրենց արդէն իսկ անբաւական ու ժերին համախմբելու: Մինչ մէկ

կողմէ ուսուցչապետ Միխայէլովքի ու զօրավար Զօնչէվ պատմութեան թիւնը կը կազմակերպէին ու Մակեդոնացի ֆետայիներու սահմանափայլէն դէպի երկիր անցըր ապստամբութեան հետամուտ էին, միւս կողմէ պատմութեան տարբեր խմբակի մը պարագլուհի Պօլս Սարաֆով, իրեն մրցակից խմբակին պատմութեան ջանքերը աւելն յայտնի ու թագուն միջոցներով չեղճացնելէ չկրնալ բաւականացնելով Մակեդոնիոյ անցիլ... Թուրքին դէմ կուռելու համար: Ոչ. այլ Զօնչէվ-Միխայէլովքի խմբակին սարքած պատմութեան թիւնը խափանելու դիտաւորութեամբ:

Բայց անձնական փոխադրութեանց արդիւնք այս ներքին աղտոտ երկպառակութիւններէ զատ, որոնք սակայն Մակեդոնական պատմութեան անյաջողութեանը տեսակետով իրենց ազգաւոր արդիւնքը լիովին զգացուցին, կայ մանաւանդ այս խնդրոյ առթիւ մեծ պետութեանց բռնած դիրքը: Մակեդոնիոյ անկախ հռչակող Սան-Սթեֆանոյի Դաշնագիրը պատուհով, Պէրլինի Դաշնագիրը ստորագրող այս պետութիւնները — իբր թէ ռահիրաները տիեզերական բաղադրութեան ու յառաջդիմութեանց — ոչ իսկ Մակեդոնիոյ ոգեվարք ժողովուրդին նկատմամբ այս անգամ իրենց մեղապարտ անտարբերութեան վարձուքին մէջ սահմանափակուի ու զեցին: Դրան մէկ շրջաբերական իրող Պետութեանց առջեւ պուլկար իշխանապետութիւնը կամ բաստանէր իբր Մակեդոնացի պատմութեան յայտնապէս մեղսակցող ու գործակցող Մակեդոնիոյ մէջ անոնց գրգռութեանցը, Մեծ Պետութիւնները, Հայաստանէ վերջ Մակեդոնիոյն արիւնտող դէպքերու ճշգրտութեանը մասին շատ լաւ, շատ որոշ ծանօթութիւններ ունենալով հանդերձ ոչ միայն զարհուրելի հաւակեր պուլկամար մը հաւատք ընծայեցին ու իրենց քիթին խնդաւոր զրան խայտառակ խեղդատակութիւնը իրաւցնէի տեղ ընդունելով

իրենց Մոֆիտայի Ներկայացուցիչներուն միջնորդութեամբը Մակեդոնական շալժուր զսպելու մասին Պուլկար արտօնքին գործերուն նախարար Տրեմ. Տոնէֆի ազգուկանութեան քաղաքացի, այլ հարկ համարեցին ապահովել տրեւնար-բու թուրք կ'աւարտութիւնը որ իրենցմէ ոչ մէկը Մակեդոնիոյ ապստամբութիւնը զսպելու համար թուրք կառավարութեան ջանքերուն արդիւք պիտի լարուցանէր. տարբեր հասկացողութեամբ՝ կա. տարեալ արտօնութիւն տուին գա. ւանին որ հասկացած կերպովը իր թափերուն մատուցած զոհին ճա. կատարելով կարգադրէ. ահա թէ 20րդ դարակիւղիւրի քաղաքակրթութիւնը մինչեւ ուր կը հասնի:

Զարմանալի չէ ուրեմն որ Ապտիւլ Համիտ Զարին այցելութեան գնացող ուս. պետական Մ. Զինո. վիւլը բացարձակապէս ապահոված ըլլալ թէ Մակեդոնիոյ մէջ ինքնաշարժութիւնը ալ վերահաս. տառապած է. կը հասկցուի թէ «հանդարտութիւն» բառը Համիտի մը բերին մէջ ինչ կրնայ նշանա. կել. ահա յայտնապէս այս կէտին առթիւ թան խմբագրականի մը մէջ հետեւեալը կըսէ. «Մակեդո. նիոյ այժմեան կացութիւնը Պե. տուածանց վրայ նորանոր պար. տառապութիւններ կը դնէ. չափա. զանց կարեւոր էր որ, աշխուրջ հակողութեանց միջոցով, վրիժա. ունեւան մտքով գործուած ողջա. կիզութեանց ու կիզեցումներու ա. ըն. ինչ որ մէջ իրենց կատարած ճնշումովը, նպատակեցին ապստամբութիւնը սեղմելու և զայն կերպով մը գոց ամանի մը մէջ փակելու. այս պատճառաւ ահա Դոան ձեռք առ ներքէ միջոցներուն հետեւանքին

նկատմամբ իրենց պատասխանա. տուութիւնը ալ աւելի մեծ ըլլա. լով, ահհրաժեշտ է որ հակամարդ. կային ոչ մէկ արարք այդ միջոց. ներքէ չարատաւորէ: Ասկէ զատ, ամէն ինչ մտածել կուտայ թէ՛ (Մակեդոնական) ազատագրութեան փորձը, որ անյաջող անցաւ, և. աւելին առթիւ վերստին ձեռք պի. տի առնուի, ու իմաստուն և հե. ռատես քաղաքականութեան իր հետեւիլ պիտի ըլլար անոր վերա. դարձին առաջին տանել, միակ միջոցով մը՝ որը միայն բարենո. րոգմանց ու Պէրլինի Դաշնագրին գործադրութիւնն է»:

Իր կարգին, քաղաքային գիտու. թեանց ուսուցչապետ՝ Ախատով լը Ռոա-Պօլիոյ՝ որ հայերու ինպատի. իր ձայնը բարձրացնելէ երբեք չէ դադարած, միջոցաւ ընկերվա. րութեան մեծ շարժաթիւններին՝ Լեռնաքէնի մէջ ազգու տաւջնոր. քողով մը Եւրոպայի կը մատնա. նըչէ նոյնքան Հայաստանի որքան Մակեդոնիոյ ներկայ, սպառնալից վտանգները, ու կը հրաւիրէ Ե. րոպական դիւանագիտութիւնը, Յրանսան մասնաւորապէս. որ այդ երկու արեւնոտ երկիրներու մէջ ապստամբական մտաւորութեան անխու. սափելի պայթմանց առաջին առ. նելու դիտաւորութեամբ, նախա. ձեռնութիւնը ունենալ ընդդիմ. Եւրոպական դիւանագիտութեանը մը գումարելու, գլխաւորաբար Պիա. լինի Դաշնագրին ստորագրութե. նէն ի վեր առկալս անգործ դրելի մնացած բոլոր ինքիւնները միան. ցամ առ մեծ կատարագիւտ և Ե. րոպայի խաղաղութիւնը վրդովելու նկրտող ու համօրէն մարդկութեան խղճմտանքը սարսեցնող բոլոր այս վայրագութեանց արեւնալի կրկնութեանը վերջ մը տուլու հա. մար:

Տ. Է.

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

Գ.

Ձեռք առնելով Հայկական խնդրոյն գործնական լուծումի հարցը, Լինչ անհրաժեշտ կը նկատէ, որպէս զի որ եւ է բարեփոխութիւն նպատաւոր արդիւնք տալ, թրքական նահանգ. ներքէ նախ երբեք մեծ բաժանմունքնե. րու վերածել: «Մէկը ձեռնադրու է Հայկական սարահարթի եւ Սեւ ծովի միջեւ գտնուած լեռնոտ գաւառներինց. երկրորդ կառավարչութիւնը ձեռնա. լու է բուն Հայկական սարահարթինց. երրորդ լինելու է Բերախտանի կա. ռավարութիւնը: Յեղիւրի անցքը Բիւր. տիտանից գէպի նոր կառավարչու. թիւնները չըջանալները պէտք է խստիւ արգիլել. և այս ընթացքը կասեցնելու համար մի մեծ ուժի հարկ չկայ, այլ կը բաւէ կազմակերպել մի բանիբուն ոստիկանութիւն»:

Առանց այս միջոցին «հաւաքական դիտողա. դիրքներ եւ բարենորոգման ծրագիրներ գործնական շատ անհշատ արժէք կա. րող են ունենալ մի այնպիսի շրջա. նակի համար, որի կառավարչական բաժանումներն տնտեսապէս թէ քա. ղաքականապէս իրար յեն համապա. տասխանում»:

Ու հեղինակը կը հրա.ւիրէ Թուրքիան որ անյապաղ այս կերպ կարգադրէ, իրեն իսկ կենսա. կան շահերուն համար: Մէկ կողմէ «Եւրոպայի իւր արդի բոլոր անխղճու. թեամբ մէկտեղ, պիտի չկարողանայ ներդաւրած աշխուրջ նայլ այս աստի. ճան յառաջ գնացած քաղաքական յոռի կազմակերպութեան վրայ: Օս. մանցիներու բարեկամները մէկը միւսի ետեւինց պիտի ստիպուին մէկգի քա. ռուիլ. ուշ կամ կանուխ երկաթաուղ. Գերման կայսրութիւնը պարագաների բերմունքից պիտի հարկադրուի բռնե. լու այն միեւնոյն գիրքը՝ ինչպէս իւր անդրադիմի վրայ Մեծ Բրիտանիա. միեւնոյն ժամանակ ուսակա հողին սահմանակից նահանգներում սպառ. նալի արագութեամբ աճում է միայն. պիտի կացութիւն, որ արդէն իսկ հրաւիրում է եւ կարող է շուտով պա.

հանջել Ռուսիոյ միջամտութիւնը»:

Միւս կողմէ, հեղինակը կը ցուցնէ թէ այնպիսի կարգադրութիւն մը, ինչպէս ինք ցոյց կուտայ, Հայկական անկախութեան մը նախաքայլը պիտի չըլլար գլխաւորաբար երկու պատճառ. ներքով. նախ, եթէ Հայերը ապա. ղային անկախութիւն ալ ձեռք ձգեն, այն ատեն հաւանաբար «Հայերի հա. մակրանքի ծանրութեան նմանը Օս. մանեան կայսրութեան կողմը ի պա. հանջել հարկին պիտի հակի»:

Երկրորդ՝ Հայկական անկախութեան խնդրեր պարզապէս քամի են եւ ծայրայեղո. րէն աւելորդ լուրջ ուշադրութեան»:

Այս բանն ալ երկու տեսակէտով. նախ «այսօրուայ Հայերը չունին ղեկավա. րող պետեր և ոչ էլ այնպիսի մի գա. սակաւք որից հնարաւոր լինէր դուրս բերուելու նպատակի համար պահան. ջուած առաջնորդները» (*):

Ինչորոգ դարում երբ նորա ազատութեան մահ. ուան դուռն հասած խալիֆայութեան ձեռքից, ունէին իրենց զանազան սո. տիճանի իշխաններն ու ազնուական. ներքէ Այդ դերասաններն անհետա. ցել են, առանց ունէ հեռք թող. նելու»:

Երկրորդ՝ «Պուլկարիոյ գէպը չէ կարելի իբր օրինակ վեր առնել Հայաստանի համար. այնտեղ քրի. տոնեաները կազմում էին ազգաբնա. կութեան ստուար մեծամասնութիւն, եւ նորա չունէին կաշկանդիչ կապեր Օսմանեան կայսրութեան մնացեալ մա. սերի հետ, ինչպէս Հայաստանը ունի. ռացի այս, Հայերը յունին, եւ ի. րենց պտնուած պայմանների մէջ հա.ւանական էլ չէ որ կարողանան ունե. նալ բաւականաչափ սեփական ոյժ, այդպիսի մի նպատակ իրականութեան հասցնելու համար: Հեղինակը «Հայ ցեղերի բուն շահերի համար օգտակար է տեսնում տեղական ազգային բարե. նորոգումներ, քաղաքականօրէն ան. լուծման կողմէ»:

Օսմ. կայսրութեան

(*) Պալլանի հովիւները եւ անտաշ լեռնականները՝ որ այսօր ազատ պե. տութիւններ կազմեցին 21-30 տարի առաջ ունէին միթէ Հայոց պսոթ. ուան ունեցածին քառորդը:

Դիս. Խոնք.

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (26)

Թ. Ի. Ա. ՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ԱՐԻՒՆԱԼԻ ԲՈՒՆԱԿԱՆԸ...

— Ինչ է այդ պատահանութիւնը, ընդհատեց Տէր Օհան:

— Ո՛հ, Տէր Հայր, Ռէն Մէլիք անկից չորս տարի առաջ յանձնարարեց ինծի որ հոս գայի ու իր տանը մէջ պահուած գրամը հանելով իրեն տա. նէի. բայց, ինչպէս ըսի, բանտարկուեցայ ու չյա. ջողեցայ պարտականութիւնս կատարելու: Այսօր կարելի չէ՞ այդ նպատակին հասնիլ:

— Ինչպէ՞ս չէ... բաւական է որ գիտնանք ուր գտնուելը:

— Կարծեմ թէ՛ «մեծ սիւնին տակ, երկու քայլ հեռաւորութեամբ, փոս մը փորած ու դրամներս թաղած եմ» ըսաւ Ռէն Մէլիք:

— Շատ աղէկ. բարեբաղդաբար մեծ սիւնին ուր ըլլալը չեմ յոռցեր: Ատիկա այս գիշեր կը կատա. րենք:

— Աւելի՛ք վստահելի մէկը:

— Ինչ զատ վստահելի մէկը չեմ գտնիւր ատանկ գործի մը համար:

— Ինչպէ՞ս... դուք պիտի փորէք:

— Այո՛, ես պիտի փորեմ:

Վանական չխօսեցաւ, որովհետեւ Տէր Օհանին ինչ կամքի տէր ըլլալը շատ աղէկ գիտէր:

Իրիկուն հէմ՝ դաւաճան քահանային տունը գա. ցին երկուքն ալ:

Օ՛հ, տունին մէկ անկիւնը քաշկուտած անկո. դին մը կար, որուն մէջ կը քնանար ան:

Վանական մօտեցաւ այդ գարշելի մարդուն, որ ծովէն դուրս հանուած մեռելի մը գոյնը ստացած էր: Նայեցաւ... երկա՛ր, խռովայո՛ղ եւ կսկծալի՛ կեր. պով մը նայեցաւ անոր ամբողջ կերպարանքին վրայ ուր հողւոյն գարշելի սեւութիւնը պատկերացած էր եւ ուր անիծեալ ստուեր մը կը գալարուէր ու նե. խած չունչ մը կը պատէր անաւոր երեւոյթով մը:

Տէր Կարապետ, զարհուրելի երազէ մը արթնցած՝ աչքերը բացաւ ու իր անկողնին սնարը կեցած եր. կու անձերուն նայեցաւ:

— Աստուած օգնական, մրմնջեց Տէր Օհան՝ ճիգ մը ընելով:

— Աստուած... օգնա՛... կա՛ն... զողողած Տէր Կարապետ խղճուելու մօտ ձայնով մը:

Ու հետաքրքիր սկնարկ մը նետելով Վանականին վրայ, հարցուց.

— Ո՞վ է ան:

— Հեռաւոր բարեկամս է... ձեզ տեսնելու փա. փաքեցաւ, ատոր համար բերի, պատասխանեց Տէր Օհան:

— Բայց... ծանօթ մը կերելի ինծի... մրմնաց

հրէշտալի քահանան այնպիսի սոսկումով մը որ զինքը ցնցեց կայծակէ մը զարնուած մարդու մը պէս:

— Այո՛, ծանօթ եմ ձեզի... չեչտեց Վանական՝ քիչ մը մօտենալով:

— Ձեմ յիշեր... չեմ գիտեր թէ ո՛ւր տեսած եմ ձեզ, վրայ բերաւ Տէր Կարապետ:

— Հարկ չկայ... մի՛ յիշեք... միայն թէ Աստու. ծոյ արդարութիւնը ձեր աչքին առջեւը բերեք, ձեր անցեալը մի՛ մոռնաք... առարկեց Վանական խիստ ու հրամայական եղանակով մը: Դո՛ւք՝ որ ձեր կո. ջուսին հակառակ՝ մորացաք խղճի ձայնը, դո՛ւք՝ որ ձեր ձեռքը սրբազան անօթէ մը դուրս հանելով, ար. զար ու հայրենասէր մարդու մը արեան վէջ թաթ. խեցիք, ըսէ՛ք ինծի, ի՛նչ պատասխան մը պիտի տաք այն Աստուծոյն՝ որուն վրէժխնդրութիւնը մարդկային վրէժխնդրութեանը չհամարի:

Դաւաճան քահանան օձի մը պէս գալարուեցաւ... իր սիրտը՝ որ սեւցած կոյտի մը պէս կուրծքին տակ կը մնար, կտոր կտոր եղաւ: Յայտնի էր թէ ամեն բան հասկցաւ... ամեն ըսածները կուսեց:

(Շարունակելի)

շահերի հետ, որպէս զի իրենց աստի-
ճանաբար ածուցումը իրանգամայն հնա-
րաւորութիւն ունենան ազգեցիկ զեր
կատարել ամբողջ կայսրութեան մէջ»
մինչ անկախութիւնը «նոցա կատարելի
գործունէութիւնը պիտի սահմանափա-
կէր պարզապէս մի չնչին պետութեան
նեղ երջանակի գործունէութեան մէջ»:

Այս գլուխն ալ, ամենակարեւորը,
կը փակուի 1863ի Ազգային Սահմա-
դրութեան վրայ մէկ քանի խօսքերով,
որը, Լինչի կարծիքով, եթէ իր
բովանդակ ոգիով գործադրուելու ար-
տօնուէր, Պոլսոյ ու Փոքր Ասիոյ
Հայկական նահանգներու բարեփոխու-
թեան հիմնալի կերպով պիտի պատ-
շաճէր: Իսկ գրքին մնացեալ մասերուն
մէջ ընդարձակօրէն կը խօսուի էր-
զրումի, վանայ ու Խրիմեան Հայ-
րիկի Հայ վերածննդի խնամ գործին մէջ
կատարած զերին մանրամասնութեանցը
վրայ, Տրապիզոնի վրայ, եւ այլն:

Պ. Տօնապետեան, Լինչի այդ երկ-
հատոր ստուար հեղինակութիւնը այս-
քան աւելի, այսքան պայծառ, այս-
քան հիմնալի կերպով ճշգրիտ կաղա-
պարի մը մէջ թափելէ ետք, յաւել-
ուածի մասի մը մէջ ալ այդ գրքին ու
Հայերու նկատմամբ յայտնուած օ-
տարներու կարծիքը կը ներկայացնէ:
Պիտի արժէք որ իր երկրին, իր
ցեղին կարգի թեւաւոր շահագրգռուող
ամէն Հայ փութար Պ. Տօնապետեանի
այս գիրքը կարգալու, որը, մեզի
համար էպպէս անծանօթ, էպպէս
մութ կարգ մը յեղափոխութեան վե-
րաբերեալ խնդիրներու մասին ան-
կողմնակալ հայտերի մը հրահանգիչ
սեւտութիւնները կը պարունակէ:

Տ.

Գինն է 3 Ֆրանկ

Աշխատասիրողին հասցէն է՝
Godolphin Road Shepherds Byhs
LONDON W.

ՅԱՆՅԱՆՔԸ ՈՐՈՒՆ Է

Ե.

Վառնայի Հ. Յեղ. Դաւնակցութեան
«Արշալոյս» Մասնախումբի
գեղճոյնները

(Շաբ. 75րդ թիւին)

Տիկնանց մասնախումբի այդ ան-
քիւմաններն ուշի ուշով աչքէ ան-
ցունելէս վերջ, այլեւս տարակու-
սելու պէտք չկար, քանի որ ա-
նոք վարդոյի և Օ. Գ.ի ձեռա-
գիրներն էին. եւ այդ սօքիման-
ներէն թացարմախաղէ կերեւէր
4,800 ֆրանքի չափ գեղճոյն մը.
այդ գեղճոյն հեղինակն էր վար-
դօն և իր ձագուկը Օ. Գ.: վար-
դօն այլեւս ինձ համար կմախք մը
դարձած էր որ միայն զիշատիչ
ազգաւններուն օգտակար կրնար ըլ-
լալ այս պատճառաւ վաղուց յա-
րաբերութիւնս դադարեցուցած էի
իրեն հետ:

Մասնախումբի անդամուհիներ
րուն նպատակն էր որ, եթէ Դաւ-
նակցութիւնը բարոյապէս չպատ-
ժէր վարդօն, իրենք խնդիրը հրա-
պարակէին, որուն համար իմ ա-
ջակցութիւնս խնդրեցին:

Մասնախումբի պահանջը շատ
արգարացի գառայ և սիրով ինք-
զինքս տրամադրելի ըրի իրենց
ձեռնարկին: Բայց խնդրեցի ի-
րենցմէ որ քանի մը օր համբե-
րեն, և համակերպեցան: Նպա-
տակս էր նախ Ռոստոմի և եթէ
հարկ ըլլար, պիւռոյին գրել. ո-
րովհետեւ այդ պեղծումները հրա-
պարակել Դաւնակցութեան ան-
նպաստ պիտի ըլլար:

Իսկոյն գրեցի Ֆիլիպէ Ռոստո-
մին, առանց մասնախումբի անունը
տալու. միայն թէ քսած էի. «Վար-
դօյի մէկ ահուկի պեղծումն եւս ե-
րեւան ելած է. եթէ այդ գեղ-
ծումն հրապարակուի, Դաւնակ-
ցութեան երբեք պատիւ չպիտի
բերէ. ուստի ապագային Դաւնակ-
ցութեան և ձեր հանդէպ պատաս-
խատալու և դատապարտելի չմնա-
լու համար, կը խնդրեմ որ նա-
մակս ստացած վարկեանիդ հոս
գաս և խնդրեմ կարգադրես»:

Ջօրեան (Ռոստոմ) իսկոյն պա-
տասխանեց թէ չէ կարող վառնա
գալ և ինձ կը յանձնարարէր խն-
դիրը կարգադրել: Ռոստոմի այս
պատասխանը առնելէս վերջ, ա-
պահովագրեալ նամակով մը կրկին
զինքք վառնա կանչեցի և առիակցի
որ անպատճառ գայ, որովհետեւ
առանց իր ներկայութեան խնդիրը
կարգադրել անկարելի է:

Ռոստոմ, նամակս առնելէս վերջ
հեռագրով մը ինձ իմացուց իր նա-
մակին սպասել: Նամակը ուշացաւ,
Յանկարծ վարդօն իր քուրջի կտո-
րոգ, իր յատուկ հոյհոյութիւննե-
րով սկսեց մեր վրայ յարձակիլ, և
քանի մը իրեն արքանեակ քոտտ-
ներով ոչխարափոտ գործիքներով,
իր քուրջի կտորի (թերթի) սիւ-
նակները մրտնդիլ, եւս համոզուե-
ցայ թէ Ռոստոմ իմ գրածներս
վարդօյին իմացուցած էր, և թի-
րեւս անոր հետ համաձայնած էին
զիս սեւացնելու:

Վերջապէս եկաւ Ռոստոմի նա-
մակը. կարգ մը անկարեւոր պատ-
ճառներով չէր ուզէր վառնա գալ
և կը յանձնարարէր այդ գեղճոյն
խնդիրը Պալատեանի կեդրոնական
գօմիթէին (Ֆիլիպէ) յանձնել ի բըն-
նութիւն:

Իբր անհատ, իբր յեղափոխա-
կան զինուոր մը, իմ պարտքս կա-
տարած էի զէպի յեղափոխական
կուսակցութիւն մը. բայց քանի
որ այդ կուսակցութեան ընդհա-
նուր ներկայացուցիչը չէր ուզէր
խնդիրը տեղն ի տեղը կարգադրել,
և քանի որ Տիկնանց մասնախումբը
և ես վստահ էինք իրենց, այլեւս
խնդիրը հրապարակել հարկ եղաւ:
Եւ զիմեցինք իրաւունքի խմբագ-
րութեան որ հաճեցաւ այս էջերու
մէջ հիւրընկալել այդ գեղճոյննե-
րու պարագաները, զորս հոս կրկ
նել աւելորդ է:

Վառնայի կարգ մը տիկիներ և
օրիորդներ զգալով թէ պարտք մը

ունին զէպի յեղափոխութիւնը, ո-
րոշած էին իրենց կարողութեան
չափով մասնակցիլ Յեղափոխու-
թեան Ս. Գործին, և օժանդակ
մասնախումբ մը կազմած էին. իսկ
երբ տեսան իրենց վստահութեանը
չարաչար գործածուիլը և հաւաք-
ուած դրամներուն փոխանակ նպա-
տակին ծառայելու վարդօյի նման
կարգ մը իրենց անշահ կաշին քարշ
տուող և հանգիստ ապրողներու
յատկացուիլը, որոշեցին չյլեւս գոր-
ծելէ դադարիլ: Յանցանքը որունն
է:

Յ. Կ. ՃԱՆԿԻԼԵԱՆ

(Շաբաթական)

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամերիկայի զանազան կողմերն
գտնուող ազօթատեղիներու հո-
գաբարձութեանց պարտականու-
թիւնը գծող կանոնագիր մը պատ-
րաստուած և վաւերացուելու հա-
մար Ս. Հայրապետին ուղարկուած
էր, Ն. Վեհափսեակութիւնը այդ
կանոնագիրը նոյնութեամբ հաս-
տատած և Հայրապետական կոն-
դակով մը իր գոհութիւնն յայտ-
նած է Ամերիկայի հագնոր հովիւ
Սարաճեան: Տ. Յովսէփ եպիսկոպո-
սին այսպիսի գործ մը ի գլուխ
հանած ըլլալուն համար, որով
վերջնապէս սահմանուած էն Ամե-
րիկա գտնուող եկեղեցական և
աշխարհական դասակարգին պար-
տականութիւններն իրենց ա-
զօթատեղիներուն մատակարարու-
թեան նկատմամբ:

— Վանայ Պատր. փոխանորդն
և Գաւառ. վարչութիւնը գրով մը
Պատրիարքին ծանուցած են թէ
գարնական նոր տարեշրջանի սկիզ-
բը կեդր. Հայկազնեան ուսումնա-
րան մը պիտի բացուի, յայտագ-
րելով միանգամայն անոր մատա-
կարարութեան վերաբերեալ պայ-
մանները, առայժմ այս մասին ա-
ւելի որոշ տեղեկութիւն մը չկայ:

— Ռուս կառավարութիւնը ո-
րոշեր է որ այսուհետեւ կովկա-
սահայոց ամուսնալուծման դատերն
ալ Հայոց Գուպաւային կրօնական
Ատեաններուն (կոնսիստորիա) առ-
ջեւ չտեսնուին, այլ քաղաքային
ձեռնհաս դատարաններու առջեւ:
Այսպէս ուրեմն, զէպի առաջացու
այս նոր տնօրէնութեան համա-
ձայն, դատական մասը քաղաքա-
ին դատարանին մէջ վճռուիլէ ետք
կրօնական մասին որոշման համար
պիտի յղուի ուղղակի Ս. Էջմի-
ածնի Սինոտին:

— Կովկասահայ թերթերէն կը
հասկցուի թէ քաղաքապետութեան
ընտրութիւններուն մէջ Հայերը
վրացոց դէմ բուռն պայքար կը
մղեն. ուստի թերթերը աւելի
վրացոց կողմը կը բռնեն, որով-
հետեւ այս վերջինները հայերու
ընտրութիւնը չը յաջողցնելու հա-
մար նորեկ առաջ դիւղացիները ի-
րենց հետ կ'առնեն: Սակայն և

այնպէս Տիգրիսի մէջ հայերու ընտ-
րութիւնը գրեթէ ապահովուած է.
բայց Երեւանի ազգայինք նա-
խանձի և կուսակցական ներքին
պատճառներով ասպարէզը պար-
սիկներու կը ձգեն. հակառակ մե-
րայնոց այդ նահանգի մէջ էն կա-
րեւոր գիրքին, այս անգամ հա-
ւանականաբար քաղաքապետը և
անդամոց մեծագոյն մասը օտա-
րազգիներ ըլլան, մինչդեռ մինչեւ
ցարդ Հայեր եղած էին:

— Տիգրիսի առաջնակարգ ըն-
տանիքներէն Տիկ. Մ. Թուման-
եան մտադիր է մանուաւոր թատ-
րոն մը հիմնելու, ուր կ'սրելի ըլ-
լայ աժան գնով շարժիլը հրեք
ներկայացումներ տալ. իսկ թա-
տերական ծախքերուն յաջող գո-
ցելու համար յիշեալ Տիկինը կը
մտադրէ թատրոնին շէնքին տակը
խանութներ շինել:

— Երեսիոյ առաջնորդին Պատ-
րիարքարան զրկած տեղեկագրէն
կերեւայ թէ Մարաշի Ժամհար-
եանց Որբանոցին մէջ կը գտնուին
և Ս. Ստեփաննոսի Որբանոցին
մէջ 101 աշակերտներ 1/41 մանչ և
171 աղջիկ նոյնպէս Գերմանականին
մէջ 113 աղջիկ և 200 մանչ, նաեւ
բողջական քարոյչի մը հսկողու-
թեան տակ 12 աղջիկ: Ընդամենը
Մարաշի որբանոցները 658 երկսեռ
աշակերտ կը պատասխարեն ու կը
կրթեն:

— Այնքն Պատրիարքարան հա-
սած տեղեկագիր մը ցոյց կուտայ
թէ վերջերս հոն պատահած դա-
ւանափոխութեան շարժումին մէջ
խարբիրդի Հայ-Հռոմէական ա-
ռաջնորդին մատը կայ. բայց
բարեբաղդաբար այդ դաւանափո-
խութեանց առաջքն առնուած է:

ԻՐԱՆԻՈՒՆՔԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

Տ. Պ. Ա., Ահեղու. — Ինչպէս ձեզ
նոյնպէս մեր ուրիշ բաժանորդներուն
երկտողերով իմացուցած ենք իրենց
հաշիւները մինչեւ տարեգլուխ. ով որ
ցոյց տրուած դրամը վճարէ մինչեւ
յառաջիկայ Դեկտեմբեր 31 վճարած
կըլլայ իր բաժնեգիրը:

Պէտք է սա ալ չը մոռնալ թէ, աշ-
խարհի որ ծայրը որ երջաք, յազիր-
ներու բաժնեգիրները կանխիկ վճա-
րել ընդհանուր օրէնք է:

Տ. Անդրեան. Բիւրիզ. — Ա. Գ. է
ստացանք ձեր վճարած 1 ֆրանքը:

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԵՐ ԳՈՐԾԱԿԱԼԸ

Ամերիկայի մեր գործակալն է Տիար
Յակոբ Մ. Ֆրանքեան, որուն թէ՛
թերթի եւ թէ՛ գրքերու համար կա-
րելի է դրամ յանձնել մեր հայոցն եւ
յանձնարարութիւններ ընել:

Հասցէն է՝

ՅԱԿՈԲ Մ. ՖՐԱՆԿԵԱՆ

176. Սօ Պալատ Ար.

Ռուս, Միս.

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԵ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Սթանպոլտան Սոֆիա թարիգի
իւն Նոյեմբեր 2 թարիխի թէլէ-
կրաֆ պիտիորիւր :

«Մաքէթնիստա չէթէլէրին
տաղլըմըլ օլտըղընը հէր նէ գա-
տար Պապը Ալի թաստիգ իաէյոր
իսէտէ, առէր եէնիտէն թէլըիւ-
լընրյոր: Պապը Սէրասքէր րա-
հաթմարդ տըր վէ զուհուրա կէլ-
մէսի մէհուգ օլտն եէնի իսթի-
լալտան տօլալը, աքէրիյէ հա-
զըրլըպլարը իչիւն էմիլլէր վէրմիչ
տիր» :

— Նոյեմբեր 1 թարիխի Ատէն-
տէն վերիլէն թէլլկրաֆ պիտէն,
իթալիա տէօվլէթի թէլլէր հիւ-
քիւմէթինին կէօսթէրմիչ օլտըղը
թէմիւնաթտան մէմնուս գալմսյուպ,
Միտի թօքա թուլմագ իչիւն
տօնանմայա էմիր վէրմիչ տիր :

Գէզա Նոյեմբեր 2 տէ թէքրար
Ատէնտէն վերիլէն թէլլկրաֆ ի-
թալիա տօնանմայրտան Միտի-
նին թօքա թուլմուլ օլտըղընը
պիտիորիւր :

— Աթան Սթէֆանի Միտինին
(Արապիստանըն Եւմէն վիլայէթի
տալիլինտէ) իթալիալըլարտան թօ-
քա թուլմուլ օլտըղընը թէք-
զիպտէն սօնրա, տիկէր թարաֆ
տան եէնիտէն թաստիգ օլտընը,
իթալիալը սէֆիլէր աթէչէ պաշ-
լամալընտա՝ թիւրքէր տէրհալ
թալէպ օլտնան թաղմիւնաթ վէ
գուրսանլարը թէսլիմ իթմէր իչիւն
Նոյեմբեր 11ինէ գատար վատէ
իսթէմիչլէր: իթալիալըլար չիմտի
պու վատէնին իթմալընա գատար
պէքէլէնէքէլէր :

Իթալիալը ամիրալըն թանթա-
նա իլէ Սթանպոլտա հիւսնի գա-
պուլ պուլմասընտան վիզիգըլմէթ
հէտիլէր վէ նիշանլար ալմասըն-
տան սօնրա պու հարէքէթլէրի
եազըլտը մը :

Սուլթանա «կո՛ւկո՛ւկ» տէմէք
սըր սըր տըր :

— Ձարա կիթմիչ օլտն օսմանլը
հէյէթի Սթանպոլտա տպոլէթ իթ-
մէք իւղրէ Եաթատան եօլա չըգ-
մըլ տըր :

— Աստրիա վիւքէլա ըէյիսի վէ
խարիճիյէ նազըրը գօթի կօլու-
խոգսքիէ Սուլթան Օսմանլը մու-
րասա նիշանընը իհտա իթմիչ
տիր :

— Գօլէրա սէպէպիլլէ՝ Սուրէս
վէ Պաղէստին սահլլէրինտէն կէ-
չէն վարօրար իչիւն Ալմանիա իս-
քէլէրինտէ տըզգաթ օլտնմասը
Պէրլինտէն էմր օլտնմըլ տըր :

— Օն կիւնտէն պէրու Սթան-
պոլտա եուլմուրդա խասթալըղընա
հիչ քիմէ թուլմուլտըղընտան,
պուլտան պէօլլէ օրատան հարէ-
քէթ իտէն վարօրարա «թէմիլ»
չահատէթնամէսի վէրիլմէքտէ տիր :

— Իզմիրտէ թիւհարը մէօթէ

պէրանտան Պալիօղլան էֆէնտի-
նին գաթիլի Հիւսկեան էրմէնի գօ-
միթէսի թարաֆընտան իհրա օ-
լտնտըլը թաւն եազմըլ տըր իսէ-
տէ, պու հապատիս էլան հիչ պիր
թարաֆտան թաստիգ օլտնմարը
տըր :

ՏԱԼԻԼԻԹԵ

Գրալ Գարօլըն Բրէնս Ֆէրտի-
նանտ իլէ Բուսնուգտա կէօրիւմէ-
լէրի ալաֆրանկա Նոյեմբեր 11 տէ
վուգու պուլմադը վէ Բլէլլանըն
մուհարէպէ օվաւընա տալի զիյա-
րէթ իտէնէկի Սօֆիատան պիտի-
րիլմիչ տիր: Մալիւմ օլտըղը իւղրէ
սօն Բուսն-Թիւրք մուհարէպէսինտէ
մէզքիւր օվաւա Բուս վէ Բուլմէն
օրտուսընըն գօմանտանը Գրալ Գա-
րօլ տըր, վէ Ղազի Օսման բաշա
եէսիր տիւլիպ, գրլընըն անա
թէսլիմ իթմիչ իտի: Մէզքիւր
ֆիթուհաթ Բուսնանտան պէլլիւ-
տէն գըրալըղա եիւքսէլմէսին վէ
Պուլկարալըն սէրպէստիլէթ պուլ-
մասընա պաշլընա սէպէպ օլմուլ
տըր: Իլլէ հէր իքի միլլէթ ի-
չիւն բէք պէօլլիւք էհէմմիլլէթի օ-
լտն մէզքիւր ֆիթուհաթ զիքրի
ճէմիլի պէլլիլէրինտէ տօսթլըղը
գուլվէթլէրիւմէկէ վասիթա օլա-
նագ տըր: Հէր իքի հիւքիւմէթին
վիւքէլա ըէյիսլէրի՝ Մ. Տանէվ վէ
Մ. Սլուրըզա՝ հիւքիւմտարալը-
նըն միւլապաթընա հազըր պուլ-
նաէպ տըրլար :

— Էվլէթի նիւսթէմիլլէր եազ-
տըղըմըլ իւղրէ, Բուսնուգտա Մա-
քէթնիա գօմիթէլէրին թիւրքէլ-
րի էօլտիւրմէլէրին տայիր Սթան-
պոլտան վերիլէն մալիւմաթըն է-
սասսըղ օլտըղընը վէ աքսի օլա-
րագ՝ Բուսնուգտա պիր թիւրքին
պիր արնապուտը գաթլ իթիլի-
նի, ֆապաթ ճանինին տէր հալ
տէրտէսթ օլտնտըղը Սօֆիա տան
պէյան ու իլան իտէյօրլար :

ԲՈՒՄԱՆԻԱ

«Ալեանս Իլլալիլթ» նամ մէշ-
հուր Եահուտի չիքթէթինին Բա-
րիստէ պուլընան իտարէի մէքէ-
զիյէսի Ֆիւսսա վէ իթալիա տէվ-
լէթլէրինէ պիրէր արիլէ թագաթիմ
իտէրէք, Բուսնուգտա պուլընան
Եահուտիլէրին աշվալը մազտուրէ-
սինէ պիր մուսվէնէթ իսթիւրհալ
իթմիչ տիր: Մէզքիւր արիլէ
Պէրլին աշտնամէսինին 44ինճի
պէնտինի կէօսթէրէքէք, Բուլմէն
հիւքիւմէթինի պու պէնտին աշ-
քեմալընա մուղայիր հաքարէթ իթ-
տիլինի, վէ Եահուտիլէրէն էնէպի
նազարը իլէ պագտըղընը, պուլն-
լարը պիր թագըմ հազլարտան
մահրուլ իթտիլինի սէօլլէյօր:
Եանի սօգազլարտա մալ սաթմաք-
քէօլլէրտէ տիւքիւն աշմագ, իչ-
կի վէ թիւլիլին սաթմագ, հիւ-
քիւմէթ մէմուրիլլէթինտէ պուլ-
լընմագ, էնզաճըլըզ վէ ալօզաթ-
լըզ իթմիլ իլին Եահուտիլէրին
մէզըն օլմատըղալընը թաստուտ:

տան սօնրա՝ 250,000 քիչիտէն միւ-
թէնալիլ պիր էհալինին սէֆա-
լէթինի նազլ իտէյօր: Իչպու 1902
սէնէսի զարֆրէտա 10,000 քիչի
Բուսնուգտան հիճիլլէթ իթմէկէ
մէհպուր օլտըլար՝ վէ տիկէրլէրի
տէ իսթէր իսթէմէզ թէրքի վա-
թան իտէլէքլէր տէյօր: Պու սէ-
ֆալէթին էօնիւնիւ օլմագ իչիւն
Ֆրանսա վէ իթալիա տէվլէթլէ-
րինին Մ. Ամերիկա իլէ պէրապէր
միւտալէլէ իթմէլէրինի ինսանի-
լէթ նարընա ընէա իտէյօր:

Լըուս Պօլիտիկի թէքլիֆի իւզ-
րէ իչպու Եահուտի մէսլէսինին
Էրմէնիստան վէ Մաքէթնիա մէ-
սէլլէրի կիպի պիր գօնֆէրանս
թէլլէրի իլէ հալլ օլտնապիլէնէ-
կինտէն, Եահուտիլէր տալի քէն-
տի թէսիրլէրինի իհրա իտէրէք
պիր Էվրօքա Գօնֆէրանսընըն
թէլլէրիլին սալ ու զայրէթ իթ-
մէլի տիրլէր :

— Գրալ Գարօլ պու ալըն 29ըն-
տա Օրէնս վարօրը իլէ եօլա չը-
գաճագ վէ Բուսնուգտա 300-400
մէթրօ գալարագ Բրէնս Ֆէրտի-
նանտ վարօրը մալսուլէ վիւքէ-
քէլալ իլէ պէրապէր գրալը գար-
չըլալաճագ տըր: Սահաթ 2 1/2 տա
Բուսնուգտա Բրէնսին սէրայընա ի-
նէնէքլէր :

Նոյմ. Յուլ Բրէնս վէ Գրալ պուլ-
կար վարօրընա րագի պէն Սամ-
վիլլէ կիտէնէքլէր: օրատան Նի-
քօրօլը կէզտիքտէն սօնրա սաթթ
6 1/2 տա Գրալ Գուլնի-Մալկուրէլ
թարիգի իլէ Բուսնուգտա ալտէթ
իթմէք իչիւն Նիքօրօլտան հարէ-
քէթ իտէնէք տիր :

Իչպու սէյահաթտա՝ վիւքէլա-
տան մաստա՝ Պուքմէշ պուլկար
մասլահաթիլլալը վէ Բուսնուգտա-
նըն Սօֆիա գօնսօլը պէրապէր
պուլընաճալար :

ՄԻԻԹԵՆԷՎԻԹԵ

Թայմըլ Նէհրինտէ պիր Սպան-
եօլ վարօրը ինկիլիզ վարօրա-
լընտան պէրինէ չարքըլմագլէ
սուլա պաթմըլ տըր: 24 թայֆէ-
լէրտէն 22սի պօղուլմուլ :

— Տիօն վէ Բիշարտ նամ իքի
ֆրանսըլ մէպուս մէհիստէ պիր
պիրլէրինէ հազարէթ իթմէլէրին-
տէն նաշի գըլընէ տուլլի իթտի-
լէր, Բիշարտ օաղ գօլընտան եա-
րէլէնտի :

— Ատէնտէն պիր թէլլկրաֆ
պիտէն Սոմալանտա (Աֆրիգա)
ինկիլիզ աքէրի իւղրէրինէ եէրլի-
լէր հիւճուլ իտուպ, շէտիտ պիր
միւսատէմէտէն սօնրա ինկիլիլլէր-
տէն 70 վէ եէրլիլէրտէն 62 քիչի
թէլլէթ օլտրագ կէրի շէքիլմիչլէր
տիր :

— Բուսնուգտա վէ Եուլման տէօվ-
լէթլէրի պէլլինտէ միւնապտ օլա-
ն իթթիֆազնամէտէ՝ Մաքէթնիա-
տա պուլկար գօմիթէլէրին հարէ-
քեմալընա գարչը հուգուգը սիյա-
սիլլէրինի միւլլէրիլլէն մուհաֆա-
զա իթմէք իչիւն չարթլար վար-
լըլը :

ԹԻԻՃՃԱՐԻՅԵ

ՎԱՌՆԱ, 25 Հոկտեմբեր

ՋԱԽԻՐԷ

ՊՈՒՂՏԱՅ
Վալոն Լիպ. 57-58 հքթ. 8.40/9.25
Արապա լիպ. 53-62 հքթ. 8.-/10.30

ԱՐԱՅԱ
Վալոն 100 քիւ 9.40/9.50
Արապա 45-50 լիպ. հքթ. 5.60/6.-

ՋԱՎՏԱՐ
Վալոն 53-54 լիպ. 7.-/7.20
Արապա 7.-/8.-

ՖԱՍՈՒԼԻԱ 100 քիւ 16.-/22.-
ԵՈՒԼԱՅ

Վալոն 100 քիւ 10.40/10.50
Արապա հէքթ. 5.40/5.70

ՄԻՍԻՐ
Արապա լիպ. 56-57 հքթ. 6.-/7.80
Միսիր եաշ օլուր իսէ աշաղը ֆի-

յաթլէ պիլէ ալան բէք պուլընմայօր:
ՏԱՐԸ լիպ. 57-58 հքթ. 8.60/7.40
Կիւնտէ 300-400 արապա վէ 25-30

Վալոն կէլմէքտէ տիր:
Վալոն մուսմէլէսի ալթուն ֆը-

րանքլէ, արապա կիւմիւլլէ: Նարօ-
լէսն 20.40 ֆրանք:

ԲԱՄՈՒԲ

Վարնա մաղազալարընտա իրլիք սա-
թըլլարը:

Ինկիլիզ իրլիկի Ն. 8-14 10.-
» » Ն. 18-24 12.-

Եէրլի իրլիք Ն. 8-14 9.60
Աթըլըն բամուլ հօղա 2.-

Բամուլ ֆիյաթլարը եիւքսէլլէք-
տէ տիր:

ՊԱՆԳԱԼԻԹԵ

Վարնա բիւսալարտա պագալիլլէ
մալլէրին պու կիւնքի ֆիյաթլը, ալ-
թուս ֆրանք իլէ:

ԳԱՆՎԷ 1.50/1.85
Եէքիլ Նէմքէ - .56

» (Բէսմէ) սանտըզ 29.50
Բիւրիլն ճարտն չուլալը 37.-/-

» Ֆիլիպէ » 36.40/-
» Ինկիլիզ » 25.-

» Բիւլոն » 52.-
ԿԱԶ Սանտըղը 7.30

Ջէթիլն ԵԱՂԸ քիւ - .78/-
ԳՈՒՐՈՒ ԻԻԶԻՄ - .32

ՍԱՐԱՅԻԹԵ

Նարուլէն 20.30 ֆրանք
Օսմ. լիւրսը 22.80 ալթուս ֆրանք

ԳԱՆԱՅԱՅ ԿՈՒՋՈՒԻ

Տօպրիչի Թաղ. Թորհուրդը կը
խնդրէ ծանուցանել թէ տեղւոյն
եկեղեցւոյն մէջ պաշտօնապարելու
համար քահանայի մը պէտք կայ:
Որ քահանան որ կուզէ հոն պաշ-
տօնապարել, գիւմուլ է Տօպրիչի
Թաղ. Թորհուրդին: 2-4

ՍՐԱՀ "ՍԱՆԴՐԱԼ"

Նաշեմս (Յոյս) հայ գերասանական
խումբը այս գիշեր՝ պիտի ներկայա-
ցունէ առաջնորդութեամբ Տ. Վ. Պա-
պեանի «Առկույ ճիւղները» սրտա-
շարժ թատերադրութիւն 5 արար:
Ծիծաղաշարժ զաւեշտ 1 արար:
Սովորական գին:

Одговорникъ Н. Драгулевъ

Печ. на Хр. Н. Войвиковъ—Варна